ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Գրիգոր Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, վաստակաշատ գիտնական Գրիգոր Մեսրոպի Գրիգորյանի 80-ամյակը:

Գ. Գրիգորյանը ծնվել է ՌԴ Հյուսիսային Օսեթիայի Վլադիկավկազ քաղաքում, եղեռնից փրկված բիթլիսցի հոր և սարիղամիշցի մոր ընտանիքում: Ծնողների (հայրն ավարտել էր հանրահայտ Սանասարյան վարժարանը) փափագն էր որդուն պատշաճ կրթության տալը: Դա իրականություն դարձավ, երբ 1937 թ. Գրիգորյանների ընտանիքը տեղափոխվեց Հայաստան: Երևանում Գ. Գրիգորյանն ավարտելով միջնակարգ դպրոցը՝ 1948–49 թթ. ուսումը շարունակում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այնուհետև ընդունվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը, որը գերազանց գնահատականներով ավարտում է 1954 թ.: Աշխատանքային մկրտությունը նա ստանում է 1954–1956 թթ. Եղեգնաձորի շրջանի հեռավոր Հորս գյուղում՝ որպես դպրոցի տնօրեն: Վերադառնալով Երևան՝ 1956 թ. աշխատանքի է անցնում Հայպետհրատում, ապա նաև թիվ 31 միջնակարգ դպրոցում:

Նրա գիտական հետաքրքրությունները սկսում են ձևավորվել արդեն Եղեգնաձորում, ուր նա, շրջելով մերձակա բնակավայրերը, ուսումնասիրում է հայկական միջնադարյան հուշարձանները և գրառում դրանց որմերին փորագրված արձանագրությունները: Ընտանիքում և ուսումնառության տարիներին ստանալով պատմագիտական և լեզվագիտական (նաև գրաբար) հիմնավոր գիտելիքներ՝ Գր. Գրիգորյանի հետագա ողջ գործունեությունը նվիրվում է հայկական վիմագրերի, հուշարձանների ուսումնասիրությանը:

Նրա գիտական գործունեությունը սկսվում է 1962 թ., երբ ընդունվում է Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ վիմագրության բաժինը՝ անցնելով ավագ լաբորանտից մինչև առաջատար գիտաշխատողի արգասավոր ուղի: Ներկայումս ինստիտուտի հայ վիմագրության բաժնի վարիչն է:

Գր. Գրիգորյան գիտնականի ձևավորմանը մեծապես նպաստեց նրա աշխատանքային միջավայրը, որը հնարավորություն տվեց շփվելու հայագիտության, վիմագրագիտության նշանավոր ու վաստակաշատ այնպիսի գիտնականների հետ, ինչպիսիք են Մեդրակ Բարխուդարյանը, Կարո Ղաֆադարյանը, Բաբկեն Առաքելյանը:

Գր. Գրիգորյանը ի սկզբանե գիտական ուսումնասիրությունների առարկա դարձրեց Սյունյաց աշխարհը, նրա միջնադարյան պատմության տարաբնույթ խնդիրները, պատմամշակութային հուշարձանները, վանական հաստատությունները՝ որպես կրոնական, ուսումնական, գիտական կենտրոններ: Այս հիմնախնդիրների հմտալից քննության արդյունքում 1973 թ. հրատարակվեց արդեն ձևավորված գիտնականի առաջին ծավալուն ուսումնասիրությունը՝ «Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դդ.», որի համար 1967 թ. հեղինակին շնորհվել էր պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: Աշխատության մեջ միջնադարյան Հայաստանի վանական միաբանությունների վարչատնտեսական գործունեության բազմակողմանի քննությունը կատարված է Սյունյաց աշխարհի վանքերի օրինակով: Վանքերի առաջացման սոցիալական ու քաղաքական հիմքերը, միաբանությունների կալվածատիրության ընդլայնման, ապահարկության խնդիրները քննարկված են մատենագրական և վիմագրական բազմաքանակ սկզբնաղբյուրների հենքի վրա, ինչը մեծապես նպաստել է աշխատության գիտական բարձր մակարդակին: Առանձնակի քննության առարկա են դարձել միաբանությունների հիերարխիկ սկզբունքներն ու եղանակները, վանքերի գիտակրթական, մշակութային գործունեությունը:

Գրիգորյանի գիտական ուսումնասիրությունների առանցքային բնագավառներից մեկը դարձավ նշանավոր Օրբելյան իշխանական տան պատմությունը: Մատենագրական, ի մասնավորի՝ վիմագրական հարուստ նյութին քաջատեղյակությունը նպաստեց նրա առավել ծավալուն «Սյունիքը Օրբելյանների օրոք, XIII–XV դարեր» (1981 թ. Երևան) և ավելի ուշ՝ «Դրվագներ Սյունիքի պատմության (IX–XV դդ.)» (1990 թ. ռուսերեն) աշխատությունների հրատարակմանը:

2004 թ. Մոսկվայում հրատարակվեց այս երկրորդ գրքի լրամշակված, նոր նյութերով ու փաստերով հարստացված տարբերակը, Օրբելյան իշխանների մերօրյա շառավիղ, Առնտրի համաշխարհային խորհրդի (Սան Ֆրանցիսկո) նախագահ Գարի Աղապարոնի Օրբելյանի հորդորով և մեկենասությամբ:

Հայկական իշխանական տների պատմության ուսումնասիրությունը պատմագիտության կարևոր խնդիրներից է: Այս բնագավառում մնայուն արժեքներ են ստեղծվել: Սեղանի վրա են բազմաթիվ աշխատություններ: Այսօրինակ ուսումնասիրությունների շարքում իր պատշաճ տեղն են գրաղեցնում Գր. Գրիգորյանի աշխատությունները, որոնք Սյունիքի զարգացած միջնադարի և Օրբելյան իշխանական տան պատմության առավել ուշագրավ ու ծավալուն մեկնաբանությունն են: Հանգամանորեն ներկայացված է Սյունիքի քաղաքական-տնտեսական, մշակութային կյանքը խիստ բախտորոշ, իրադարձություններով հագեցած ժամանակահատվածում՝ թուրք-սելջուկների, մոնղոլ-թաթարների և թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում: Մատենագրական և վիմագրական հարուստ նյութի հիման վրա ուրվագծված է Օրբելյան իշխանապետության քաղաքական, ռազմական, կրոնամշակութային գործունեությունը:

1985 թ. «Սյունիքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմությունը XIII–XV դդ.» ատենախոսության համար Գր. Գրիգորյանին շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

Դեռևս 60-ական թվականներից Գր. Գրիգորյանը վիմագրության բաժնի արշավախմբերի կազմում ակտիվ մասնակցություն է ունենում վիմական արձանագրությունների հավաքման գործին՝ Հայաստանի և Արցախի շրջաններում: Գիտնականի վիմագրական հետաքրքրությունները ներառում են նաև նախկին Խորհրդային Միության հայկական գաղթավայրերի արձանագրական նյութերի հավաքումը: Շուրջ երկու տասնամյակ շրջելով Ռուսաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի նախկինում հայաբնակ վայրերում՝ մեկ առ մեկ ընդօրինակում և վերծանում է հարյուրավոր քարեղեն վկայագրեր, որոնցից շատերն այսօր չեն պահպանվել: Նա հավաքել է ոչ միայն հուշարձանների որմերին փորագրված վիմագրերը, այլև տարբեր թանգարաններում պահվող հայկական եկեղեցական սպասքի, այլ առարկաների հիշատակագրերը: Գր. Գրիգորյանի համբերատար և մանրակրկիտ պրպտումների շնորհիվ հասարակայնության սեփականությունը դարձավ Մոսկվայի Կրեմլի զինապալատի և Պատմության պետական թանգարանի պահոցների տասնյակ եկեղեցական առարկաների ու սրբազան մասունքների վրա դրոշմված հայկական հիշատակագրերը: Արդյունքում՝ 1996 և 1999 թթ. լույս տեսան «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի VII և VIII հատորները, որոնք ընդգրկում էին համապատասխանաբար Ուկրաինայի, Մոլդովայի և Ռուսաստանի Դաշնության հայկական հուշարձանների վիմական արձանագրությունները: Այս հատորներում հայերենից զատ տեղ են գտել նաև զգալի թվով ռուսերեն, լեհերեն, գերմաներեն, լատիներեն, հայատառ ղփչաղերեն արձանագրություններ, որոնք ներկայացված են բնագրերով և հայերեն թարգմանություններով: Այս հատորներում հրապարակված աղբյուրագիտական հսկայածավալ նյութը կարևորագույն նշանակություն ունի հայկական գաղթավայրերի պատմության և մշակութային կյանքի ուսումնասիրության համար:

Գր. Գրիգորյանի գիտական գործունեության անքակտելի մասն է կազմում հայ մշակույթի և պատմության պրոպագանդումն ու մասսայականացումը: Շրջագայությունների ընթացքում ուսումնասիրելով գաղթօջախներում պահպանված մասունքները, նա մեծ աշխատանք է կատարել մեր մշակութային արժեքները տեղի մասնագետներին, հասարակությանը հասու դարձնելու, թանգարանային ցուցադրություններ կազմակերպելու, վերաիմաստավորելու ուղղությամբ: Դրա վառ ապացույցն է հայերեն հիշատակագրերի այն հարյուրավոր ռուսերեն թարգմանությունները, որ նա կատարել է Կրեմլի զինապալատի և Պատմության թանգարանի համար: Իսկ այն, ինչ նա իրականացրել է Թեոդոսիայում, ստեղծելով Քարեդարան-թանգարան՝ թարգմանաբար ներկայացված արձանագրություններով, արժանի է մեծ դրվատանքի:

Սյունյաց աշխարհի նկատմամբ ունեցած նրա նախասիրությունների արգասիքն էր 60-ական թվականներին ձեռնարկած Վահանավանքի միջնադարյան պատմաճարտարապետական համալիրի պեղումները, որոնց շնորհիվ բացվեց մի հոյակերտ համակառույց, հայտնաբերվեցին հնագի-

տական ուշագրավ նյութեր, արժեքավոր հուշակոթողներ: Գտնվեցին վիմական բազմաթիվ արձանագրություններ, որոնք կարևոր նշանակություն ունեցան Բաղաց թագավորության և Սյունյաց հոգևոր աթոռի պատմության նորովի շարադրանքի համար: Գր. Գրիգորյանի համառ ջանքերի շնորհիվ ձեռնարկվեցին նաև հուշարձանախմբի վերականգնման աշխատանքները, որոնք այսօր գրեթե ավարտվել են: Վահանավանքի պատմահնագիտական ուսումնասիրությունները նա ամփոփեց 2007 թ. հրատարակած «Վահանավանք» երկլեզու մենագրության մեջ: Այս թեմատիկային է վերաբերում նաև 2009 թ. լույս տեսած «Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից)» էսսեն:

Գաղթավայրերում, Հայաստանի տարբեր շրջաններում, հատկապես հայկական բանակի զորամասերում, հայոց պատմության և մշակույթի վերաբերյալ նրա կարդացած հարյուրավոր զեկուցումները նպաստել են մեր մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, սեփական պատմությանը հասու լինելուն:

Հայրենասեր գիտնականը իր հրապարակային գործունեությամբ շոշափելի ներդրում է ունեցել արցախյան շարժմանը: Այդ կապակցությամբ գնահատելի է նրա «Ղարաբաղյան օրագիրը (1988–1992)», որտեղ հրապարակված են հեղինակի խնդրին առնչվող նամակներն ու հեռագրերը:

Ղեկավարելով Վահանավանքի արշավախմբի աշխատանքները՝ Գր. Գրիգորյանը Կապանի շրջանում ծավալել է գիտական լայն գործունեություն, ուսումնասիրելով երկրամասի պատմությունն ու մշակույթի հուշարձանները: Տարածաշրջանի տարբեր հաստատություններում (արտադրական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ, զորամասեր) հանդես է եկել դասախոսություններով՝ ներկայացնելով երկրամասի պատմությունն ու մշակույթը: Բարձր գնահատելով գիտնականի այս ազգանվեր գործունեությունը, Կապանի իշխանությունները նրան շնորհում են պատվավոր քաղաքացու կոչում:

Գր. Գրիգորյանը գիտական աշխատանքին զուգահեռ շուրջ 30 տարի զբաղված է մանկավարժական գործունեությամբ, Երևանի մի շարք բուհերում դասավանդելով հայ վիմագրություն և պատմագիտական այլ առարկաներ:

Դասախոսական գործունեության արդյունքում նա հրատարակել է «Հայկական վիմագրություն» (2000 թ.), «Սյունիքի պատմություն»
(2001 թ., հեղինակակից՝ Սերգեյ Հախվերդյան) ձեռնարկները: Հատկապես կարևորվում է «Հայկական վիմագրություն»-ը, որ հայ իրականության մեջ բնագավառին վերաբերող առաջին դասագիրքն է: 1993 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի պատվավոր կոչում:

Գ. Գրիգորյանի գիտամանկավարժական ու հասարակական գործունեությունը վերջերս արժանացավ պետական բարձր գնահատանքի. նրան շնորհվեց «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում:

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ